զիտնալ թէ՝ նոյն քաղաքը աւելի մեծ զարգացում ստացաւ շը-նորհիւ հռոմէական այն լեգէոնին, որ Քրիստոսի 70 թուականին, Երուսաղէմը պաշարող ուրիշ լեգէոններու մէջ գտնուելով՝ քա-ղաքին առումէն յետոյ, Տիտոսի ձեռքով հաստատուեցաւ ի Մե-լիտինէ, Եփրատի արևմտեան կողմը։ ԺԲ. լեգէոնն էր ան, Շան-թաձիգ գունդը, որ իբր խորհրդանշան կը կրէր չանթազարդ վա-հան և դրօշակ, որ եփրատական ամրութեանց մէջ դարանակալ կը հսկէր հայկական և պարթևական արշաւանքներուն դիմա-դրելու համար։ Ռազմական կայան մըն էր Մելիտինէ, և Հռով-մայեցիք գիտցան օգտագործել «Հատեանց» մեծամեծ ամրու-թիւնները։ ԺԲ. լեգէոնին ի Մելիտինէ բնակութեան և տեղական դիւրութեանց պատճառաւ քաղաքը քիչ ատենէն մեծապէս զար-գացաւ, ամէն կողմէն խուժեցին հոն և Հայոց բազմութիւն մը, Հռովմայեցւոց օրերէն մինչև Յուստինիանոս, հոն կարևոր տեղ մը գրաւած ըլլալով՝ քաղաքը լեգէոնական բանակավայրէն դուրս տարածուեցաւ, և մինչև 518, հռոմէական կայսերք կարևորու-թիւն ընծայեցին Մելիտինէին և զարգարեցին զայն հանրային մեծամեծ շէնքերով։ Զ. դարուն սկիզբը հարկ եղած էր քաղա-քը պարսպել, Անաստաս կայսրը ձեռնարկեց գործի բայց չուտ մեռաւ. Յուստինիանոսի վերապահուած էր այդ գործը յանձնել տեղացի Հայոց, որ կատարեցին զայն, ինչպէս կ'իմանանք Պրո-կոպիոսէն։

Քրիստոնէական կրօնը սկսած էր հետզհետէ տարածուիլ հռո-մէական կայսրութեան մէջ։ ԺԲ. լեգէոնը կը մնար միշտ ի Մե-լիտինէ. ան՝ ինչպէս որ քաղաքին ընդարձակման կորիզը եղած էր, նոյնպէս արմատը եղաւ Մելիտինէի քրիստոնէացման. կա-նուխէն քարոզուեցաւ Աւետարանը Շանթաձիգ գնդին շարքերուն մէջ. բազմաթիւ զինուորներ ընդունեցին Աւետարանը. ոմանք կ'ըսեն թէ ամբողջ լեգէոնը քրիստոնեայ դարձաւ։ Անոնց մա-սին Գրիգոր Նիւսացի եպիսկոպոս մեծ գովեստներ չռայլած է, յարելով թէ անոնք ո՛րքան զինուորական կարգուսարքին խըս-տապահ, նո՛յնքան զօրաւոր էին իրենց նոր ընդգրկած հաւատքին մէջ ալ։ Քրիստոնեայ Մելիտինէն, Զ. դարուն, ըստ Պրոկոպիոսի, զուտ հայկական քաղաք մը կը նկատուէր։